



Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ N 1 20 0284
Տրված՝ 18.12.2020 Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների Պալատ
հասարակական կազմակերպության խորհրդի թիվ 11ա որոշմամբ

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան 0010

Տիգրան Մեծ 4

Հեռ. +374 10 524 724

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է

«Նոր Զովք» ՍՊԸ

դեկլարությանը

Կարծիքից հրաժարում

Մենք ներգրավվել ենք իրականացնելու «Նոր Զովք» ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մենք չենք արտահայտում կարծիք Ընկերության կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մեր եզրակացության «Կարծիքից հրաժարման հիմք» բաժնում նկարագրված հարցի նշանակալիության պատճառով մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ այս ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի հիմք ապահովելու համար:

Կարծիքից հրաժարման հիմք

1. Մենք չենք նշանակվել որպես Ընկերության աուդիտորներ նախքան 202 թվականի դեկտեմբերի 31-ը, ուստի չենք դիտել պաշարների գույքագրումը այդ տարվա սկզբի և վերջի դրությամբ: Մենք չենք կարողացել այլընտրանքային միջոցների կիրառմամբ համոզվել 2023 և 2024 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա պաշարների վերաբերյալ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են 3 608 924 հազար դրամ և 4 000 555 հազար դրամ գումարներով, համապատասխանաբար:

2. Բացի դրանից, 2023 թվականի սեպտեմբեր ամսին հաշվապահական առևտրային նոր ծրագրի ներդրման արդյունքում առաջացել են որոշ անճշտություններ պաշարների անալիտիկ և սինթետիկ հաշվառման տվյալների միջև կապված 31.12.2023 թվականի դրությամբ մնացորդների հետ:

Մեր եզրակացության ամսաթվի դրությամբ, Ընկերության ղեկավարությունը գտնվում էր այդ համակարգչային թերությունների շտկման և անճշտությունների ճշտման փուլում:

3. Մենք անկարող էինք այլընտրանքային միջոցների կիրառմամբ հաստատել կամ ստուգել 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 111 916 հազար դրամ (հաստատվել է 20%-ը) և 5 884 673 հազար դրամ (հաստատվել է 26%-ը) գումարներով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված դեբիտորական պարտքերի և կրեդիտորական պարտքերի գումարները: Նշված հարցերի արդյունքում, մենք չենք կարողացել որոշել արդյոք անհրաժեշտ կլինեն կատարել պաշարների, դեբիտորական պարտքերի և կրեդիտորական պարտքերի արտացոլված և չարտացոլված գումարների ճշգրտումներ, ինչպես նաև համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունների տարրերի ճշգրտումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առընչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և՛ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի լրումն այլ հարցերի կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցում ենք աուդիտորի առաջադրանքի պլանավորած շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի՝ ներառյալ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունները:

25 հունիսի, 2025 թ.

Տնօրեն-բաժնետեր, տ.գ.թ./առաջադրանքի ղեկավար՝

Աղավնի Բաբայան

